

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Մ. Խաչատրյան

գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն

Սույն թեման միանգամայն հասկանալիորեն՝ դժվար, տարողունակ, անսահման և հարուստ է, և, թերևս, դյուրին չէ մեկ հոդվածի սահմաններում ըստ ամենայնի տալ հայ դասակարգականության հսկաներից մեկի հայրենասիրական քնարերգության ամբողջական նկարագրը։ Մեր նպատակն է որպես ուղեցույց՝ տալ այն առավելագույնս արդյունավետ ուսուցանելու ձևերն մեթոդները, նախ, մինչև Ղուկ.Շիրազի հայրենասիրական քնարին անդրադառնալը, անհրաժեշտ համատեղ ներկայացնել նրա մուտքը գրական աշխարհի, բերել Վարպետի՝ Ալ. Խաչատրյանի խոսքը պատանի բանաստեղծի մասին, և ապա, լայն ճանաչման արժանացած, արդեն ժողովրդի կողմ դարձած Ղուկ.Շիրազի մասին։ «Շիրազը հայակապ դեմք է մեր արեգիայի պատնառում...», ինչպես նաև Ալ.Շիրվանզադեի գնահատականը։ «ընդհանուր ազմուռի մեջ մարդը լիլիկա է բերում»։

Մի նրկու խոսքով ներկայացնել է հարկ նաև «ընդհանուր աղմուկի» ժամանակաշրջանը՝ 30-ական թվականները, երբ գրական շուկան ողողված էր աշուղական նեյտիմներով և տրակտորի և կոլխոզային կարգերի գովքը երգող օրապակաս ոտանավորներով ու ոտանավոր չիներով... Ահա այս ֆոնի վրա իր գողաթաթախ, հորդաբուխ ու սրտապարար երգերով առաջարկ է իջնում հայ դասական բանաստեղծության շքեղ արքան, մայրենի լեզվի գերակայության պահանջը դնու է իր հզոր Թուր Կեմակի գրչով Հայոց մեծ նղեների հանգագործներին պատժելու մեջյունով, Սուրբ Մատթոցի առաջ ծննդադիր խոնարհումով, վերածնված Հայաստանի հոգևոր ու տնտեսական թռիչքներով խանդավառված...

Ղեռք է անաչայման նշել, որ Շիրազի հայրենասիրական քնարերգությունն առնի մի կարևոր պատմական հատկությունը. դա այն է, որ բանաստեղծի հայրենասիրական քնարի գլխավոր մեխը մեր ժողովրդի պատմական անցյալն է, 1915թ. աշխարհագունց ողբերգությունը. ինչպես նաև Հայաստանից հանիրավի պոկված տարածքները (Նախիջևան, Արցախ), հաճախմանը անհրաժեշտ է կանգ առնել խորհրդային դիմագրկող, համահարթող ժամանակների վրա, երբ ինտերնացիոնալիզմի դեմքը, կեղծ ծննդան ու ուսանելի ուղեկցությամբ խնդրում էր ազգային, ճշմարիտ հայրենասիրության ամենամանջան դրսևորումը, էլ ուր մնաց գրաբնության աչքից վրիպել Ղուկ.Շիրազի՝ մեր կորսված հայրենիքի. գազանորեն հոշոտված Արևմտյան Հայաստանի ու արևմտահայության սահմելեցուցիչ ողբերգության թեման, որը Ղուկ.Շիրազի հայրենասիրական քնարերգության ամենատեղ երակն է, բանաստեղծ, որի գրական հզոր տաղանդը դուրս հարկաց առաջարկվող ու պարտադրվող բոլոր կաղապարներից, ջարդ ու վշտը արնց ամեն կարգի կապանք ու շղթա, արհամարհելով գրաբնություն ու հալածանքներ, մերժվելու շղնդունվելու ու չտարագրվելու ակրնհայտ իրողությունը։

Անհրաժեշտ է շեշտել այն փաստը, որ Ղուկ.Շիրազը գլխավորում է խորհրդահայ գրականության ոչ մեծ թիվ կազմող այն հսկաների շարքը, որոնք չներկայացնելով այն ժամանակ անընդունելի ու սարքալիստգրու։ Ինտերնացիոնալիզմի հիմնականներով էլ ղուկ.Շիրազի կացնում էին ում պատահեր, աննախանջ խոյանում էին ընդդեմ թուրք հայատայաց մարդակերները և հանուն մեր արդար պահանջատիրության։

Ոչ որ չի կարող երգս կաշառել Դեպի Մառիս է երթս աննախանջ...

Անհրաժեշտ է նպատակալուստացրն խմբավորել նրա այն բանաստեղծությունները, որոնցում անդրադառնում է արևմտահայության՝ 1915թ-ի Մեծ նղեներին, առանձին ուսուցանել նույն թեմայով գրված պոեմները, մի քանի ժամ հատկացնել «Հայոց Դանթեականը» պոեմին, հրապարակ հնուտ ասաներով կամ ձեռք բերել նրա ձայնավավառակները ու լսել հատվածներ պոեմից։ Անգլիկ հանձնարարել սովորողներին՝ հատվածներ պոեմից, ընտրությունը թողնելով իրենց հնարավորության դեպքում ցուցադրել Մեծ նղեներին նվիրված տեսաֆիլմեր։ Ջուզանե անցկացնել Ղուկ.Շիրազի և այն գրողների հայրենասիրական րեքթիվաժների միջև, որոնք այս կամ այն չափով տողատակներով թե բացահայտ, անդրադարձել են 1915-ի ողբերգությանը։

Կողք-կողքի դնել «Հայոց Դանթեականը» և «Անյոնի գանգակատուն» մեծակտավ երկերը և բացատրել նույն թեմայով կերտված նրկու հանձնարող գործերի նմանություններն ու տարբերություններն, նրկու պոեմների գեղարվեստական կատարման ձևերն ու մեթոդները գրականության նրկու հսկաների ոճական յուրատիրությունները և գրական նախասիրությունների տարբերություններն ու թեմատիկայի նմանություններն։

Տոփ.Շիրազի հայրենասիրական լիրիկան ուսուցանելիս անհրաժեշտ է առանձնացնել «Արցախը եւ Տոփ.Շիրազը» թեման ու հանգամանորեն անդրադառնալ բանաստեղծի «Ողբ Ղարաբաղի» ստեղծագործությանը, որը գրվել է, երբ Արցախը խոր թախիբի մեջ էր դնուս եւ ողմկոյոյ, անկախության համար պայքարի նյնելու մարտահրավիր է դարձել հետագա տարիներին: 1988-ին, արդեն, այն այրուն բոցավառող, վրեժի ու խոյացման կոչող հզոր խթան էր ու անկրեւ սուր եւ հնչում էր հրատարակներու (ԼՂ-ի հինգ շրջանների կենտրոններում) ծովագած «Միացում Մայր Հայաստանին» պահանջող միտինգականների շարժերից:

Քանի իմ հողերն ինձ չեք տվել,
Ես ձեզ վատակ պիտի ասեմ,
Ավարայրի վարդան դառած՝
Ձեզ ելուզակ պիտի ասեմ...
Այս, ե՞րբ պիտի ինչպես բանտից,
Նախիջևանի ձեռքից բռնած,
Տուն գաս հավետ Մասիսի հետ՝
Ղարսն ու վանը ձեռքից բռնած,
Որ ազգովին Մասիս նյնեք...

Հանձնարարել անգիր: Մեկ անգամ ես անդրադառնալ արգելության ձայնը խնդրող, ազգային շահերն անտեսող խորհրդային ժամանակներին, ուր իր ստեղծագործական ողջ կյանքն է ապրել ազատաբեռ թանաստեղծը՝ հավատարիմ մնալով իր մուսայի արդար կանչին, անխաթար պահելով մարդարնի իր անզուգական ու ազնվածին էությունն ու մարդկային հազվագյուտ նկարագիրը, արհամարհելով դափնիներ ու սարապի, ընդդեմ գնալով հասանքին, որն ինտերնացիոնալիզմի դրոշի տակ բարեկամության պին նյնիմներն էր թեղացնում, իսկ մեր արտամական հայրենիքի մեծ մասում՝ Արևմտյան Հայաստանում, օրավար փյվող մեր սուրբ քողարքների ու տաճարների ավերակները հարագատ ձեռքի փաղաքշանք են աղերսում... Նախիջևանը՝ բացառապես, իսկ Արցախը ծածուկ ու քողարկված թուրքացվում էր նպատակալազգորեն... Այս ամենը տեսնում էին բոլորը, լուսն էին գրեթե բոլորը, սակայն ազգային մեծ ողբերգության կողքով չէր կարող անտաբեր անցնել ազգային մեծ բանաստեղծը, որի «երթը» հիրավի, ոչ-ոք չկարողացավ կաշտելու եւ ոչ մի գնով:

Տոփ.Շիրազի հայրենասիրական լիրիկան ուսուցանելիս, հարկ է առանձնացնել նաև «Շիրազը հայ ժողովրդի նվիրական բարձանքների լողձասագ» թեման: Ի մի բերելով նրա այն ստեղծագործությունները, որոնցում մեր ազգի Մեծ Ըղձասագը խտացրել է դարերի ճամփորդ մեր ժողովրդի մաքառումը եւ արդար իղձերը, դաժան ճակատագիրն ու լուսավոր նրազները («Տեսնեմ Ահին ու նոր մեռնեմ»):

«Տոփ.Շիրազի հայրենասիրական քնարերգության առանձնահատկությունները» ներավորնագրի տակ հարկ է շնշտել այն, բոլորիս հայտնի, իրողությունը, որ միայն Հայաստան հայրենիքի պատմական անցյալին, իր ապրած ժամանակշրջանի խոխրդային Հայաստանին նվիրված երգերն չեն ընդգրկվում բանաստեղծի հայրենասիրական քնարերգության մեջ. Շիրազի անհուն, սահման չճանաչող, գարնան հեղեղի պես հզոր ու հավսուն հայրենասիրությանը ներծծված է նրա ամբողջ ստեղծագործությունը՝ թե մայրականը, թե սիրային լիրիկան, ին թե հայոց լեզվին նվիրված նրա սրանչելի քերթվածները: Բերում ենք համապատասխան բանաստեղծություններ, առավասիկ հայոց լեզվին, նրա՝ միշտ տազնապայի գոյությանը նվիրված մի կտոր, ուր հայրենապաշտ գրողը Թուր կլեմակի գորությունն ունեցող իր գրչով ծառ է լինում «անըշտում» ու «հայակույ» ժամանակների դեմ:

Ավարայրի դաշտն է երկեզ՝ գրասեղանն իմ լռին,
Դաշտ եմ խուժում վարդանի պես
Թուր կայծակին իմ ձեռքին,
Դուրս չեմ գալու, ես կզոհվեմ,
Կկիզվեմ այդ սուրբ դաշտում,
Որ չդիպչես հայոց լեզվին
Ժամանակներն անկշտում...

Հայոց լեզու... մայր... մայր... մայր հայրենիք անբավտեղիորեն շաղկապված, միախուսված են Տոփ.Շիրազի պոեզիայում:

Մայրական թեմայով գրված ամենասրտապարար բանաստեղծություններում մայրը ներկայացնում է որպես մայր-հայրենիք: Որպես օրինակ բերել ծրագրային, վաղուց մեր դպրոցական ծրագրերում իր արժանի տեղն զբաղեցրած «Մայրս» բանաստեղծությունը, ուր բանաստեղծը գրել է. «Այս, մայր երգելուց ինչպես կշտանամ, մայրս պատկերն է մայր

